

«Միաբանութիւն Հայոց Ս. Եկեղեցւոյն ընդ Մեծի Ս. Եկեղեցւոյն Հոռովմայ» (7) :

Պօղոս Արքեպիսկոպոս աւելորդ կը նկատէ սակայն ներմուծուած սրբագրութիւնները. եւ Եազլովիեցի ու Քամիենիեցի մէջ ժողովուրդը կը յորդորէ հաւատարիմ մնալ հայ աւանդութեանց, եւ Վալաքիայէ կը գրէ նաեւ նոյն հաւատացեալներուն ընդդէմ Թորոսովիչ Արքեպիսկոպոսին, դայն որակելով երդմնագանց եւ ստասլատիր հանդէս Պատրիարքին եւ Սրբոյ. Պապին (8) : Սակայն լսելով Եղիազարի հակաթոռ Կաթողիկոսութիւնը եւ իր նամակին պատճառած խռովութիւնը, յետս կոչուած կ'ընէ գրելով այսպէս նոյն ժողովրդեան «...Քոչիմէն ձեզի գրեցի, յորդորելով գողցես որ չընդունէիք ձեր Արքեպիսկոպոսը, այլ սպասէիք Հոգեւոր Տիրոջ եւ Սրբադնասուրբ Պապին հրամանին. բայց երբ Քիլ հասնելով իմացանք որ Եղիազար արդէն Կաթողիկոս եղած է... Թուրքերու հրամանով... (ձեզի կ'իմացնենք՝ թէ) այլեւս կարելի չէ որ Հոգեւոր Տէրը ունէ կերպով օգնէ ձեզի, ինչպէս խոստացած էինք. որովհետեւ մեծ մտահոգութիւններու եւ նեղութիւններու մէջ կը գտնուէի : Մանաւանդ երբ մեր եղբայրը, Յովհաննէս Վարդապետ (Քիերեմովիչ) ձեզի գրեց... Քոչիմէն ձեզի ղրկած նամակիս մասին, թէ այդ՝ խռովութիւն կը պատճառէ, քաւ լիցի, սիրելիք, որ ես ուզեմ հա-

(7) Անդ, 201-202 :

(8) Անդ, 202-203 :